

**1. Մարզպետարանի դիմած քաղաքացիների դիմումների,  
բողոքների 2019թ.-ի ամփոփագիր**

2019թ-ի ընթացքում ստացվել է **948** դիմում:

**ա/** Դրամական օգնություն է խնդրել **767** քաղաքացի: **707** քաղաքացու խնդրանք բավարարվել է, **60**-ինը մերժվել, 2019թ-ին արդեն իսկ օգնություն ստացած լինելու պատճառով:

**բ/** Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **37** քաղաքացի, որից 17-ի խնդրանքը բավարարվել է, 20-ինը՝ մերժվել, /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

**գ/** Առողջապահական բնույթի **6** դիմումից դրական պատասխան է ստացել **4**-ը, երկու քաղաքացու դիմում մերժվել է:

/Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

**դ/** Աշխատանքի հարցերով դիմած **9** քաղաքացիներից **6**-ի պահանջին դրական ընթացք է տրվել, **3** դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

**ե/** Գյուղատնտեսական հարցերով դիմել են **39** քաղաքացի բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

**զ/** Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է **15** քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**է/** հողաշինության հարցերով դիմած **25** քաղաքացիներից, 22 քաղաքացի ստացել են դրական պատասխան, երեք դիմում ընթացքի մեջ է:

**ը/** Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է **36** քաղաքացի, որից 30-ը ստացել են դրական պատասխան, 6 դիմում ընթացքի մեջ է:

**թ/** Այլ բնույթի **14** դիմում է ստացվել:

:

Փ. Ղազարյան

մարզպետարանի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ